ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

«Տարվա լավագույնները» մրցույթի

«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչական լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն» անվանակարգ

Թեմա՝

«Ուսումնական էլեկտրոնային տեսանյութերը՝ տարրական դասարաններում ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետ միջոցներ»

ՀՀ Արագածոտնի մարզ, Նոր Ամանոսի միջնակարգ դպրոց
Դասվար՝ Լիլիթ Նորսոյան

-Ծրագրի նկարագիրը-

«Ուսումնական էլեկտրոնային տեսանյութերը՝ տարրական դասարաններում ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետ միջոցներ» թեմայով ծրագիրը նախատեսված է հանրակրթական դպրոցների տարրական դասարաններում դասավանդող ուսուցիչների համար:

Համավարակով պայմանավորված հեռավար ուսուցում իրականացնելը որոշակի դժվարություններ առաջացրեց տարրական դասարաններում դասավանդող ուսուցիչների համար, քանի որ տարրական դասարաններում սովորող աշակերտները դժվարանում են ինքնուրույն օգտվել տարբեր էլեկտրոնային կրթական հարթակներից: Ուսուցիչների մի մասը հեռավար դասերը անցկացնում են zoom հավելվածի միջոցով, սակայն հաճախ աշակերտները բացակայում են, և ցավոք, ուսուցիչը չունի ժամանակ մեկ անգամ ևս դասը մանրամասն բացատրելու: Ուսուցիչների մի մասն էլ աշխատում էր viber, messenjer, whatsApp հավելվածներում խմբեր ստեղծելով և այդ խմբերում նյութեր տեղադրելու միջոցով: Դասի թեման հասանելի դարձնելու համար, ուսուցիչը կարող է էլեկտրոնային տեսանյութեր ստեղծելու համար նախատեսված ծրագրերի միջոցով օրվա դասի թեման տեսագրել, որտեղ ձայնային ուղեկցությամբ նյութը ներկայացնում է այնպես, ինչպես կաներ առկա դասի ժամանակ և տեղադրի համացանցում, տարբեր հարթակներում, youtube-ում: Դասարանում տրված նյութի թղթային տարբերակին կարող է փոխարինել տեսանյութում տրված նյութով: Այն հմտությունները, որոնք պետք է զարգացվեն, կարող են ներառվել տեսանյութերում: Փորձը ցույց տվեց, որ այն թեմաները, որոնց համապատասխան ստեղծվել են տեսանյութեր և կիրառվել են դասապրոցեսի ընթացքում, շատ ավելի լավ են յուրացվել աշակերտների կողմից: Ուսումնական էլեկտրոնային տեսանյութերի կիրառումը դասապրոցեսի ընթացքում ևս անհրաժեշտ է, քանի որ դասաժամը դարձնում է ավելի հագեցած, հետաքրքիր և արդյունավետ: Ուսումնական տեսանյութերի կիրառումը արդյունավետ է նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների ուսուցումը կազմակերպելու համար:

-Ծրագրի նպատակը-

- Ուսուցիչները օգտվելով համապատասխան հավելվածներից, ծրագրերից (CamStudio, Bandicam, Screencast-O-Matic) կկարողանան ստեղծել ուսումնական էլեկտրոնային տեսանյութեր:
- Զարգացնել ուսուցիչների մասնագիտական հմտություններն ուսումնական էլեկտրոնային տեսանյութերի պատրաստման և կիրառման գործում:
- Զարգացնել ուսուցիչների ինքնաուսուցմամբ զբաղվելու կարողությունները:
- Թեման հասանելի դարձնել աշակերտներին, և ընձեռնել նրանց հնարավորություն՝ ցանկացած պահի լսել և դիտել մատուցվող նյութը:
- Ուսումնական էլեկտրոնային տեսանյութերի միջոցով ուսուցման գործընթացն առավել դյուրին դարձնել:

-Ծրագրի խնդիրները-

- Ուսուցիչներին ծանոթացնել էլեկտրոնային տեսանյութեր ստեղծելու ծրագրերին, հավելվածներին, առցանց գործիքներին:
- Ապահովվել նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական գործընթացում:
- Նպաստել աշակերտի ուսուցման առաջադիմությանը:
- Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ բարձրացնել ուսումնական գործընթացի կազմակերպման մակարդակը:
- Բարձրացնել ուսուցիչների կողմից համապատասխան ծրագրերով ուսումնական տեսանյութեր պատրաստելու և կիրառելու պատրաստվածության մակարդակը:

-Ծրագրի ակնկալվող արդյունքները-

- Կիրառելով ուսումնական էլեկտրոնային տեսանյութեր՝ ուսուցման գործընթացը դարձնել հետաքրքիր և արդյունավետ:
- Ուսուցիչների համագործակցություն:
- Աշակերտի համար թեմայի հասանելիություն:
- Ուսումնական էլեկտրոնային տեսանյութեր պատրաստելու հմտությունների, կարողությունների կատարելագործում:
- Ուսումնական էլեկտրոնային տեսանյութերի կիրառման անհրաժեշտությունն ու արդյունավետությունը դասապրոցեսի ընթացքում:
- Էլեկտրոնային տեսանյութեր ստեղծելու համար նախատեսված ծրագրերի, հավելվածների կիրառման հնարավորություն:

-Ծրագրի իրականացման պլան-

- Ուսուցիչների վերապատրաստում (էլեկտրոնային տեսանյութեր պատրաստելու համար նախատեսված հավելվածների, ծրագրերի ուսուցում):
- Էլեկտրոնային ծրագրերով տեսանյութի պատրաստում:
- Տեսանյութերի տեղադրում համացանցում և այլ հարթակներում:
- Դասապրոցեսի ընթացքում ուսումնական տեսանյութերի կիրառում:
- Աշակերտների հետ տեսանյութի քննարկում, հարցադրում, ամփոփում:

-Ծրագրի շարունակականության ապահովումը-

- Տեսանյութեր ստեղծելու համար նախատեսված ծրագրերի միջոցով համակարգչում (սահիկաշար) և համացանցում առկա պաշարների հիման վրա կարելի է պատրաստել ուսումնական տեսանյութեր և տեղադրել տարբեր հարթակներում, համացանցում:
- Տեսանյութերի կիրառումը հեռավար, առկա դասերի, բաց դասերի, ցերեկույթների, միջոցառումների ընթացքում:

Ստորև տեղադրում եմ իմ և իմ գործընկերների կողմից պատրաստած ուսումնական էլեկտրոնային տեսանյութերի հղումներ, որոնք տեղադրված են youtube–յան ալիքում

- https://www.youtube.com/watch?v=oy6xhYA6JHc&t=6s
- https://www.youtube.com/watch?v=o1-xCoKQGBs&t=5s
- https://www.youtube.com/watch?v=F3DmrM12N7Y
- https://www.youtube.com/watch?v=xHszobxomow
- https://www.youtube.com/watch?v=tgIv1A3-j3g
- https://www.youtube.com/watch?v=M_ATUlIMNJ4

Էլեկտրոնային տեսանյութեր ստեղծելու համար նախատեսված ծրագրեր

www.camstudio.org

www.bandicam.com



www.screencast-o-matic.com



Կրթության ամբողջ նպատակը հայելիները պատուհաններ դարձնելն է...

Սիդնեյ Ջ. Հարիս

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ